№ 136 Յուլիսի 29 Հինգշաբթի

1882

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Յուլիսի 29 Հինգշաբթի № 136

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի թէ իրաւունք ունեն։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Բագուից։ Նամակ Նոր-Նախիջեւանից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Իտալիա։ Ֆրանսիա։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Շերամական գործը Կովկասում։

ՄԻԹԷ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԵՆ

—

Ընթերցողի ուշադրութիւնն ենք դարձնում „Մշակի“ ներկայ համարի մէջ տպված Բագուի Նամակի վրա։

Մեզ համար մի և նոյն է թէ ո՞վ է հայոց գրքեր շպրտել Մարդասիրական ընկերութեան դրադարանից,—Կիրակոսեան, Մարտիրոսեան թէ Պօղոսեան։ Մեզ համար մի և նոյն է նոյնպէս թէ ովքեր են այն խելօք անձինք, որոնք աշխատում են աքսորել հայոց լեզուի գործածութիւնը Մարդասիրական ընկերութեան դպրոցների դասաւանդութենից։ Մեզ համար նշանաւոր է իրողութիւնը։

Մի կողմ թողնելով ազգային տեսակէտը, մի կողմ թողնելով այն պարզ, մանկավարժական, ժամանակակից ամբողջ մանկավարժութիւնից վաղուց ճանաչված և անհերքելի դարձած ճշմարտութիւնը, որ դժբաղդաբար չեն հասկացել Բագուի ընկերութեան խորհրդի խելօք անդամները, թէ ամեն ազգութեան մանուկները մասաւորապէս աւելի ընդունակ են դառնում, աւելի էլ հեշտութեամբ սովորում են ժամանակով ամեն առարկաները և օտար լեզուները, երբ սկզբից դաստիարակված են եղել միմիայն իրանց մայրենի լեզուով, որ ուղեղի ֆիզիօլոգիական կազմակերպութեանը ու նրա կանոնաւոր զարգացմանը ամենայարմարն է. մենք այստեղ հարցը կը դնենք միայն իրաւունքի, բուն իրաւաբանական հողի վրա։

Բագուի Մարդասիրական ընկերութիւնը կառավարութիւնից հաստատված մի կանոնագրութիւն ունի, որի հիման վրա և որին համեմատ պարտաւոր է գործել։ Ի հարկ է ընկերութեան խորհուրդը կարող է խնդրել կառավարութեանը փոփոխել ընկերութեան կանոնագրութիւնը ընդհանուր ժողովի վճռի համեմատ։ Բայց այն ժամանակ դա չի լինի „Մարդասիրական“ ընկերութիւն, այն մտքով, որով սկզբից հիմնվեցաւ, այլ բոլորովին մի ուրիշ բան։

Բայց քանի որ ամբողջ ընկերութեան պրոգրամը չէ փոխվել, ի՞նչ իրաւունք ունի խորհուրդը փոփոխութիւններ մտցնել իրան ենթարկված դպրոցների պրոգրամայի մէջ, այն էլ այնպիսի մի արմատական փոփոխութիւն, ինչպէս մայրենի լեզուի աքսորելը դասաւանդութենից կամ նրան երկրորդական դարձնելը։

Որքան մեզ յայտնի է Բագուի Մարդասիրական ընկերութիւնը, բարձրագոյն հաստատված կանոնագրութեան հիման վրա, ի միջի այլոց նպատակ ունի Ռուսաստանի սահմաններում հայերի համար դպրոցներ հիմնել։ Հայերի համար դպրոցներ, թէկուզ հայերի առանց կրօնի խտրութեան, նշանակում է հայոց դպրոցներ, ուրեմն նշանակում է հայոց լեզուով։ Երևում է որ կառավարութիւնն էլ այսպէս է հասկացել, քանի որ տասն և ութ տարի շարունակ թոյլ է տուել և շարունակում է թոյլ տալ որ ընկերութիւնը պահպանի և հիմնի դպրոցներ հայոց, մայրենի լեզուով։

Ուրեմն ընկերութեան այժմեան խորհրդի ջանքերը ուրիշ բան չեն, եթէ ոչ իր իրաւունքից դուրս գործողութիւն, ուրիշ խօսքով իրաւազանցութիւն։

Թող ընկերութեան խորհուրդը նախ գումարի ընդհանուր ժողով, նրան առաջարկի վճռելու այդ հարցը, և եթէ հաւանութիւն գտնի իր առաջարկութիւնը ընդհանուր ժողովի կողմից, որ շատ կասկածելի է, այն ժամանակ միայն առաջարկի ընկերութեան նոր կանոնագրութիւնը կառավարութեան հաստատութեանը։

Բայց, ի հարկէ, այն ժամանակ նոր հաստատված ընկերութիւնը կը լինի մի բոլորովին նոր ընկերութիւն և ոչ թէ առաջվայ „Մարդասիրական ընկերութիւնը։“

Ուրիշ ճանապարհով գործելով, բացի այդ միակ օրինական ճանապարհից, այժմեան խորհրդի վարմունքը թէ օրէնքի և թէ հասարակական կարծիքի տեսակէտից չէ կարող չը համարվել իրաւազանցութիւն։ Եթէ խորհուրդը կը յամառի գործել առանց ընդհանուր ժողովի հաւանութեան, ինչպէս պահանջում է ամեն վաւերացրած կանոնադրութիւն, կուզենայ մոցնել իր սեփական իշխանութեամբ այդ տեսակ մի արմատական յեղափոխութիւն և կատարեալ կերպարանափոխութիւն ընկերութեան կանոնադրութեան մէջ,—այն ժամանակ ընկերութեան ընդհանուր ժողովը կատարեալ իրաւունք կունենայ դումարվել և առաջարկել այժմեան իրաւազանց խորհրդի բոլոր անդամներին խմբովին հրաժարական տալ իրանց պաշտօններից և ընտրել խորհրդի նոր անդամներին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Յուլիսի 17-ին

Անհնարին է լռութեամբ անցնել «Մշակի» 122 համարում Բագուից հաղորդած լուրը։ Ճշմարիտ որքան որ անհաճոյ երևայ ընթերցողին մի քանիսի վարմունքը (թէ ովքեր են նրանք ես չը գիտեմ) Բագուի «Մարդասիրական ընկերութեան հայ ընթերցարանից արհամարհանքով հայերէն գրքերը դուրս չըպրտելը, ծաղրելով հայոց լեզուն,—այնու ամենայնիւ սա մի այնպիսի տրխուր, և լուրջ ուշադրութեան արժանի մի երևոյթ է, որի վրա անհրաժեշտ է խորը հայեացք ձգել։ Այստեղ բանը մի քանի անձնաւորութիւնների իրանց մայրենի լեզուն ծաղրելում չէ և ովքեր են նրանք, մեզ համար մի և նոյն է, բայց դուք զարմացքով կը նկատէք, որ բօժօժի արդիւնաբերութեան տարածութիւնը սահմանափակվում է չերտով, որը, ըստ երևոյթին, ոչ կլիմայն և ոչ հողային կողմերով մի սուր հակասութիւն է կազմում Կովկասի այլ տեղերի հետ։ Այդ չերտը սկսվում է հարաւում, Օրդուբաթով և նորա շրջականներով և վերջանում է հիւսիսում Զաքաթալի և Նուխու գաւառներով, անցնելով ճանապարհին Ղարաբաղը և ճիւղաւորվելով մինչ Շամախու և Ղուբայի շրջականները։ Կովկասի այլ մասերը ներկայացնում են աւելի նուազ հետաքրքրութիւն։ Իմերեթիան, որը ներկայացված է հանդիսում պ. Սիչինօվի անձով, Ջուզդիդիից, շատ է զիջում այն վերոյիշեալ տեղերից։ Իսկ ինչ կը վերաբերի Երևանեան նահանգին, որը այնքան մեծ նմանութիւն ունէ բնակիչների կողմից վերոյիշեալ տեղերի հետ, այնտեղ չերամապահութիւնը կատարեալ անկման մէջ է։ Դեռ այս դարվայ առաջի մասում զարմանում էր Շոպէնը այդ երևոյթի վրա։ Իր Նշանաւոր և մերազնների կողմից կարդալու շատ օգտակար ռուս լեզուով գրած գրքի մէջ, որի վերնագիրն է՝ Պատմական արձան հայկական նահանգի, սրա միաւորութեան ժամանակ ռուսաց կայսրութեան հետ, *) Շոպէնը մի հատիկ երես նուիրում է հայկական կոչված նահանգի չերամապահութեան, ուր հեղինակը գնահատում է Երևանում արդիւնաբերած մետաքսեայ թելի քանակութիւնը 10 ֆունտի և ոչ աւելի, իսկ Նախիջևանի և Ալինդաշայի մաղալներինը միասին 6 տեղային բաթման և կամ $4^1/_2$ պուդ։

Անցնենք հարցին, թէ որքան բօժօժ է արդիւնաբերվում չերամապահութեան ամենածաղկած տեղերում Կովկասի մէջ։ Սակայն նախ մենք մեր պարտք ենք համարում յայտնել, որ այս յօդուածի մէջ առաջ բերած վիճակագրական թուանշանները հաւաքված են այս տողերի հեղինակից այն անձերից, որոնք Կովկասում համարեա թէ բացառապէս չերամական գործով են զբաղված, վաճառականներից և գործարանատէրերից, որոնք, այլ աւելի դրական միջոցների պակասութեան պատճառով, ի հարկէ, ամենայարմար դրութեան մէջ են մեզ իսկական տեղեկութիւններ տալու։

Մենք բաժանում ենք Օրդուբաթի և Նուխու գաւառների մէջ ընկած հողը, չերամապահական կէտից, երեք շառաւիղների (ռէյօն) Նուխի, Շուշի և Օրդուբաթ քաղաքների անուններով, որովհետև այս վերջինները Կովկասի թելի գործարանների երեք գլխաւոր կենտրոններն են։ Օրդուբաթի շառաւիղը, երեքից ամենափոքրիկը, տարածվում է այդ անուան քաղաքից մինչ Զանգեզուր գաւառի սահմանը և մի քիչ էլ դէն, այսպէս մոտաւորապէս մինչ Սիւվատի գիւղը. Շուշու շառաւիղը բռնում է Ղարաբաղը, իսկ Նուխունը—բոլոր մնացածը, այսինքն Կովկասի չերամապահութեան չերտի ամենամեծ մասը։

Իմ քաղած տեղեկութիւններից դուրս է գալիս, որ Օրդուբաթի շառաւիղում, միջակ տարիներում, ստացվում է աւելի քան 16,000 պուդ թաց բօժօժ։ Շուշու շառաւիղում ստացվում է յիշեալ թուից 5—6 անգամ աւելի, ուրեմն մօտ 90,000 պուդ։ Նուխու շառաւիղի արդիւնաբերութիւնը աւելի նուազ մատչելի է թւում անձնական ճիշդ գնահատութեան, 200,000 պուդ չտերը ընդունում են բաւական, միւսները տալիս են աւելի մեծ թիւ, այն է 250—300,000. մենք կընդունենք առաջի յիշածը, ի նկատի առնելով մարդուս սովորական բնաւորութիւնը, չափազանցութիւնների մէջ վարպետ ցոյց տալ։

Չը նայած որ բօժօժի արդիւնաբերութեան ամենամեծ մասը Նուխու և Շուշու շառաւիղների վրա է ընկնում, չերամապահութիւնը ամենից խիտ, ամենից ինտենզիւ, որպէս ընդունված է ասել եւրոպական ազգերի գիտական լեզուում, և աւելի մեծ հակացողութեամբ լինում է Օրդուբաթի շառաւիղում։ Այստեղ ստացվում են թել մանելու համար ամենագեր բօժօժները։ Դրա պատճառը մի-

*) Լոյս ընծայված 1851 թ.։

ի դրատ «դոկիսվոռնեմՄ» դր յրատարվեր Խոսգի ոքմաղդրա Ծդսես «Ծդվջդա ՇՀր վասեՀ ի դրտ։

Լոգծառա մվենդվոնեում վր ոքմաղդրա Լդդ։

-ՈԵ մգդշգովս ի Նսմակ ՀրՈՒՐԱՆ ՀՐԱՎԱՐԱՆ ՀՐԱՎԱՐԱՆ

ԱՐԱՐԱՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԵՏԱԳՐԻՉ

«Դատեմ Ամեն մարդ մեր մեջ, Ամենայն ազգ մեր մեջ, Ամենայն դարեր մեր մեջ։ Ամենայն ինչ, որ մեր մեջ է, Ամենայն ինչ, որ մեր մեջ է, Ամենայն ինչ, որ մեր մեջ է։ Ամենայն ինչ, որ մեր մեջ է, Ամենայն ինչ, որ մեր մեջ է։ Ամենայն ինչ, որ մեր մեջ է։ Ամենայն ինչ, որ մեր մեջ է։

ԺԱՄԱՆԱԿ

Ամերիկայի «Journal d'Orient» լրատու թերթը գրում է հետևյալը. Մայիս 13-ից սկսած Եռամսյակի ընթացքում Նյույորքում գտնվող Հայոց Ազգային Հիվանդանոցում մեռել է 1 հոգի, ծնվել 3 մանուկներ։ Ամերիկայի Միացեալ Նահանգներում ամենամեծ հիվանդանոցն է։ Ուրբաթ օրվան դիակներ չեն մատնվում

դա շատ վատ հետևանքներ կունենայ ուրիշ երեւոյթների վրա, օրինակի համար գերիների վաճառման աճելու վրա, Արևելեան Ռումելիայի վարչական վերանորոգութիւնների վրա և վերջապես Թիւրքաց Հայաստանի քրիստոնեաների դրութեան վրա։ Հարկաւոր է ճնշել մահմեդականների ֆանատիկոսութիւնը, որովհետև Արաբի փաշան կամենում է ֆանատիկոսութեամբ, կոտորածներով և տէրրօրով ներգործել թէ Անգլիայի և թէ մնացած Եւրոպայի վրա։

—«Միջազգային հեռագրական ընկերութեանը» Կ. Պոլսից հեռագրում են յուլիսի 20-ին հետեւեալը։ Ասում են, որ անգլիական դեսպանատան քարտուղար Սանդիսօնին, Արաբի-փաշայի դէմ շրջաբերական հրատարակելու վերաբերութեամբ նրա արած առաջարկութեանը, Բ. Դուռը պատասխանեց, որ այդ բանը կոնֆերէնցիային է վերաբերում և այդ պատճառով թող Սանդիսօն դիմի այդ առաջարկութեամբ Թիւրքաց ներկայացուցչին կոնֆերէնցիայում։

—Լրագիրներին Կ. Պոլսից հեռագրում են, յուլիսի 20-ին, որ մի զօրաբաժին, Ակիֆ-փաշայի առաջնորդութեամբ շուտով Եգիպտոս կուղարկվի խեդիվին որպէս Թիկնապահ ծառայելու համար։ Լօրդ Դիւֆերին մի քանի անգամ խորհրդակցութիւն ունէր Սաիդ-փաշայի հետ։

—Լրագիրներին հեռագրում են, որ խեդիվը ցանկանում է, որ 200 իտալացիներ իրանց վրա առնէին պոլիցիական ծառայութիւնը Ալէքսանդրիայում և արդէն աշխատում է այս բանի մասին։

—Լրագիրներին Լօնդօնից հեռագրում են յուլիսի 20-ին։ Անգլիական համայնքների ժողովում Դիլկ, պատասխանելով Բուրկին, ասեց, որ ռուսաց գործերի հաւատարմատարը հրահանգ ստացաւ կրկին միանալ կոնֆերէնցիային։

—Անգլիական լրագիրները հաղորդում են։ Դիլկ, պատասխանելով Կոուէնին, ասեց, որ պետութիւնները պնդում են, որ սուլթանը ապստամբ յայտնէ Արաբի-փաշային։

—Փարիզից «Միջազգային հեռագրական ընկերութեանը» հեռագրում յուլիսի 20-ին հետեւեալը։ Կէսօրից յետոյ Գրէվի խորհրդակցում էր սենատի և պատգամաւորների ժողովի նախագահների և այլ քաղաքական անձինքների հետ, որոնց մէջ կային Ֆերրի և Լէօն Սէ։ Հաւատացնում են, որ մինչև այժմ ոչ ոքին չէ յանձնված մինիստրութիւն կազմելը։

—«Daily News» լրագիրը հաղորդում է, որ Սէյմուր հրահանգներ ստացաւ պահանջել, որ Ալեքսանդրիայի ամրութիւնը իրան յանձնվի, հակառակ դէպքում ռմբակոծութիւնը սկսել։

—Լրագիրներին Կ. Պոլսից հեռագրում են յուլիսի 20-ին։ Շուտով Բ. Դուռը արտասահմանի իր ներկայացուցիչներին մի շրջաբերական կուղարկի, որի մէջ կը ցոյց տայ այն արգելքները, որ Անգլիան գնում է Թիւրքաց միջամտութեանը։ Ներկայումս պետութիւնների մէջ կատարվող բանակցութիւնների վերաբերութեամբ կոնֆերէնցիայի մէջ որոշված Սուէզի ջրանցքի ընդհանուր պաշտպանութեան մասին, Բ. Դուռը արդէն յայտնեց, որ նա համաձայն է այն ամեն ձեռնարկութիւնների հետ, որոնք կընդունվեն կոֆերէնցիայում։

—«Միջազգային հեռագրական ընկերութեանը» Փարիզից հեռագրում են յուլիսի 21-ին։ Գործնական մինիստրութիւն կազմելու մասին լուրը որի մէջ կը մտնեն նախկին մինիստրութեան մի քանի անդամներ, օրինակ Բիլլիո և Ժօրէգիբերի, հաւանականութիւն է ստանում. բայց Գրէվի դեռ ոչ ոքին չէ յանձնել մինիստրութեան կազմելը։

—Լրագիրներին Կ. Պոլսից հեռագրում են յուլիսի 20-ին։ Զինուորական մինիստրը հրամայեց, որ վաղը ուղևորվեն փոխադրող նաւերը արտիլերիայի չորս մարտկոցներով. նրանք Սալոնիկից 5 մարտկոցներ կը վերցնեն. Սկուտարից և Ալբանիայից 3 մարտկոցներ, և ապա Ալէքսանդրիա կուղևորվեն, հետեւելով արդէն ուղարկված զօրքերին։

—«Daily News» լրագիրը հաղորդում է, որ բրիտանական կառավարութիւնը Թիւրքիայի գործակցութիւնը Եգիպտոսում ընդունում է միայն այն պայմանով, որ Բ. Դուռը պարտաւորվի զօրքերը Վալսէյի հրամանատարութեան տակ դնել։

—Կ. Պոլսից անգլիական լրագիրներին հեռագրում են յուլիսի 21-ին։ Անգլիայի պահանջին, որ Սուլթանը Արաբի-փաշային ապստամբ հրատարակի, Բ. Դուռը պատասխանեց, որ այդպիսի շրջաբերական կարելի է միայն այն ժամանակ հրատարակել, երբ Թիւրքաց զօրքերը Եգիպտոս կը մտնեն։

—«Հաւասի ընկերութեան» տեղեկութիւնների համեմատ, Մուսուրուս-փաշա կրկին անգամ խընդրեց լօրդ Գրէնվիլին դուրս բերել Եգիպտոսից բրիտանական զօրքերը, որովհետև սուլթանի միջամտութիւնը աւելորդ է դարձնում եւրոպական ամեն տեսակ գործողութիւն։ Գրէնվիլ բացասական պատասխան տուեց։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յուլիսի։ „Русскій Инвалидъ“ լրագիրը հաղորդում է, որ Ս. Պետերբուրգի օբեր-պոլիցմէյստեր Կոզլովին վերադարձրած է Մոսկվայի օբեր-պոլիցմէյստերի պաշտօնը։ Խարկովի նահանգապետ Գրեսսեր նշանակված է Ս. Պետերբուրգի օբեր-պոլիցմէյստեր։ „Правит. Вѣстн.“ լրագրի մէջ տպված է հաղորդակցութիւնների մինիստրութեան տեխնիկական մասնաժողովի կարգադրութիւնը կանգնեցնել երկաթուղիների գնացքները հեղեղների ժամանակ և ճանապարհ գցել միայն ուղին վերազնելուց յետոյ։ Անգլիացիները գրաւեցին Իզմայիլիա։

ՓԱՐԻԶ, 27 յուլիսի։ Դիւկլերկ յանձն առաւ նոր մինիստրութիւն կազմել։

ՓԱՐԻԶ, 27 յուլիսի։ Պաշտօնապէս յայտնված է մինիստրութեան կազմակերպութիւնը. Դիւկլերկ՝ մինիստր նախագահ և արտաքին գործերի, Ֆալիեր՝ ներքին գործերի, Դեվես՝ արդարութեան, Դիւվո՝ լուսաւորութեան, Տիրար՝ ֆինանսների, Բիլիո՝ պատերազմական, Ժօրեգիբերի՝ ծովային, Կոշրի՝ փոստերի, Մագէ՝ երկրագործութեան, Լեգրեն՝ առևտրական և հասարակական աշխատանքների մինիստրութեան ժամանակաւոր կառավարիչ։ Դեվել ընդունեց ներքին գործերի մինիստրի օգնականի պաշտօնը։

Կ. ՊՕԼԻՍ, 27 յուլիսի։ Բ. Դուռը համաձայնվեց Արաբի-փաշային ապստամբ հրատարակել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 94 ր. 50 կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. 50½ կ., չորրորդ 90 ր. 12½ կ., հինգերորդ 89 ր. 87½ կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 212 ր. 75½ կ., երկրորդ 211 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 89 ր. 50½ կ., երկրորդ 89 ր. 50 կ., երրորդ 89 ր. 60 կ., ոսկի 8 ր. 22 կ։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 24,09 պէնս, Ամստերդամի վրա արժէ 122,12 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ 25 պֆ., Փարիզի վրա արժէ 253 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

Въ Редакціи газеты «МШАКЪ» Продается БРОШЮРА „ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“ Д. Григорія АРЦРУНИ. Брошюра напечатана въ Москвѣ. Цѣна 25 коп.

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսուն է ապրում, յանձն է առնում պարապել երեխաների հետ՝ թէ արքունական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ։

Պայմանները կարելի է առաջարկել հետեւեալ հասցէով. Манглисъ, Габріэль Мирзоевъ, въ рощѣ, дача Марѳы Тимоѳѣевой.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ նախապատրաստութիւնները հոգացող կարգադրիչ ցանձնաժողովը խնդրում է այն պարոններին, որոնք որ և է **ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** ցանկանում են ստանալ **ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ** կամ հաղորդել նորան, որ բարեհաճեն **ՇՆՈՐՀ ԲԵՐԵԼ** նրա **ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷԻ ՄԷՋ** № 170։ Գրասենեակը բաց է **ԱՄԵՆ ՕՐ** առաւօտեան 9 ժամից մինչև 11 ժամը։

Մօզդոկի երկսեռ հայոց դպրոցները որոնում են ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ, ՄԷԿը հայոց լեզուի և ձայնագրութեան և ՄԷԿը ռուսաց լեզուի, թուաբանութեան և աշխարհագրութեան և ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ ռուսաց լեզուի, թուաբանութեան և ձեռագործութեան։ Շաբաթական 20—24 դասերով, տարեկան 500 ր., բնակարան, վառելափայտ, ջուր և ծառայ։ Ցանկացողները պէտք է դիմեն ուղղակի հոգաբարձութեանը։

3—3

ԹԷՅ առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւէտ։ Այդ թէյից **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ։ Օրինակ. Լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ր.—1 ր. 20 կոպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ր. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ր. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր. 50 կ., գեղեցիկ ԿԱՑՍԱՈՒ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ֆու-չու-ֆու թէյ 2 ր. մաքուր թէյ առանց թղթի։ Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր.—60 ր., երկաթէ ԳՐԻԶՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, շօկոլադ ֆրայ, Շեվիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԴԱՈՒ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ Վեբլի, ԹԱՄԲԵՐ Բարներիի, կոլմանի նրշրշաայ, ԱԼԲՕՄՆԵՐ Շվարցի կէս գնով։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷՅՈՒՄ** № 156, 157, 158, 159 և 100։

11—100

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճամադաններ 250—25 ր., սակվոյաժներ (погребцы) 6—25 ր., սամովարներ նապարհի 6—35 ր., մարտաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուսմի վալնիկներ մրամոռնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) ըէվոլվէրի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կոֆէ էլինէմի և Միխէլսոնի. Պետերբուրգո 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պադնոներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. մես կարելու մաշինայ. Անգլիական ութոներ, բրիտանկի չայնիկներ, կաֆէինիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեռամատակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուսմիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵՋԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուսներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կոճի և շալէ (гарусъ) ֆէլչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերէյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կաղր, հոտավէտ ջրեր, պուդրա, գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

102—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Іюля 1882 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул., д. каз.